ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ 1800—1870 թթ.

Վ. Ս. ԵՐԿԱՆՅԱՆ

Արևմտահայ դպրոցը. XIX դ. սկզբից արևմտահայ իրականության մեջ Կ. Պոլիսը՝ իր շրջակայքով և մասամբ Զմյուռնիան շատ ավելի վաղ թևակոխեցին կրթական նոր շարժման ոլորտը։ Իսկ գավառը, թողնված բախտի քմահաճույքին, միայն դարակեսին հաղորդակցվեց այդ շարժմանը, երբ վանական տաղտուկ խցերից դպրոցն սկսեց վարանոտ քայլերով մուտք գործել ժողովրդի մեջ։

Թուրքիայում կրթական գործը հնուց ի վեր գտնվում էր մահմեդական հոգևորականության տնօրինության տակ և ծայրահեղ կրոնական բնույթ էր կրում։ Սելիմ III (1789—1807) և Մահմուդ II (1808—1839) սուլթանները, հետամուտ լինելով ռազմական գործի կարգավորմանը, առաջին փորձերն արեցին աշխարհիկ կրթություն տարածելու ուղղությամբ։ Նրանց ստեղծած ուսումնարանները զինվորական բնույթ ունեին։ Թանզիմաթի շրջանում, 1840-ական թվականներին, կրթական գործի բարելավման ուղղությամբ որոշ քայլեր արվեցին։ 1846 թ. ստեղծվեց լուսավորության գործերի կոմիտե, և դպրոցները պաշտոնապես դուրս եկան մահմեդական հոգևորականության տնօրինությունից, որը, սակայն, խիստ ձևական էր, ինչպես և ձևական էր այն, որ օրենքով տարրական կրթությունը հայտարարվել էր պարտադիր ու անվճար[1]։ Հաջորդ քայլը լուսավորության մինիստրության ստեղծումն էր 1857 թ.։ Կրթական գործը սկսել էր տեղից շարժվել, սակայն այն ընդգրկում էր գերազանցապես մայրաքաղաքը։ Կառավարությունը միջոցներ ձեռնարկեց նաև թուրք երիտասարդներին Եվրոպա կրթության ուղարկելու համար և այդ նպատակով 1855 թ. Փարիզում հիմնեց օսմանյան դպրոցը։ Փորձեր արվեցին բարեկարգելու թուրքական այբուբենը, որի համար 1857 թ. նախագիծ էր կազմել Մ. Ֆ. Ախունդովը։ 1869 թ. հրապարակվեց կրթական նոր օրենք, որը կարգավորում էր դպրոցի կազմակերպումը և սահմանում դպրոցների աստիճանականությունն ու տիպերը։ Այդ օրենքով կայսրության դպրոցները բաժանվում էին երկու կարգի՝ հանրային (պետական) և մասնավոր (որոնց տակ հասկացվում էին բոլոր մյուս դպրոցները, այդ թվում և հայկականը)։ 1869 թ. օրենքը նկատելի զարկ տվեց կրթական գործի ծավալմանը, թեև այն շատ կողմերով ձևական էր ու դեռևս լայն կիրառություն չէր գտնում, իսկ դպրոցներում շարունակում էր տիրապետել կրոնական ոգին։ 60-ականներին փորձ արվեց ստեղծելու նաև թուրքական համալսարան, որը, սակայն, շատ կարճ կյանք ունեցավ և 1871 թ. փակվեց։ Ավելի կարևոր դեր խաղաց 1868 թ. Ֆրանսիայի օժանդակությամբ ստեղծված Գալաթասարայի լիցեյը, որտեղ սովորում էին նաև զգալի թվով հայեր։

---

[1] Տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции, М., 1965, էջ 23, 24, 31։

Օսմանյան կայսրությունում բնակվող մյուս ազգությունները, որոնք հանդես էին գալիս որպես կրոնական համայնքներ, գերադասում էին զարգացնել իրենց ազգային դպրոցները, թեև 1856 թ. նրանց ձևական իրավունք էր արված սովորելու տարրականից բարձր պետական դպրոցներում։ Կայսրությունում առանձնապես առաջադիմում էին հունական և հայկական ազգային դպրոցները։

Հայերի աշխարհիկ նոր դպրոցը Կ. Պոլսում սկիզբ առավ XVIII դ. վերջերին, երբ Սելիմ III-ը 1789 թ. արտոնեց հայոց պատրիարքարանին եկեղեցիներին կից դպրոցներ բացել։ Դրա հիման վրա առաջին դպրոցը բացվեց Գում Գաբուում՝ մայր եկեղեցուն կից, Մկրտիչ (Շնորհք) ամիրա Միրիճանյանի նախաձեռնությամբ։ Սրանով հիմք դրվեց հայկական թաղային դպրոցներին։ Դարձ ժամանակում նման դպրոցներ բացվեցին նաև Սամաթիա, Օրթագյուղ, Պալաթ, Ղալաթիա, Սկյուտար թաղերում։ Կ. Պոլսի հայերի օրինակին հետևեցին և Զմյուռնիայի հայերը։ Այսպիսով, «Թուրքիայի հայերի շրջանում աշխարհիկ կրթությունը՝ տարրական դպրոցի մակարդակով, սկսեց զարգանալ մոտավորապես կես դար առաջ, քան թուրքերի մոտ»[2]։

Սկսված գործն արագ զարգանում էր։ Կարապետ Պալաթցի պատրիարքը 1824 թ. հունիսի 10-ի կոնդակով պատվիրեց եկեղեցիներին կից դպրոցներ բացել[3]։ Իսկ Ստեփանոս Աղավնի պատրիարքը 1831 թ. առաջարկեց էսնաֆություններին հոգալ առանձին դպրոցների ծախսերը[4]։ Այս միջոցառումները նպաստեցին, որպեսզի ժողովուրդը մոտիկից շփվի դպրոցական կյանքին, շահագրգռվի նրա զարգացմամբ։ Մինչդեռ դպրոցի տնօրենը պատրիարքարանն էր, որի վրա մեծ ազդեցություն ունեին ժամանակի հզոր ամիրայական տները։ Եթե հայերի ընդհանուր հոգևոր կենտրոն էջմիածինը, որին ենթակա էին արևելահայ դպրոցները[5], խոշոր կենտրոններից հեռու էր և այս շրջանում շրջապատված էր խավարի թագավորությամբ, ապա արևմտահայ դպրոցի տնօրեն պատրիարքարանը գտնվում էր Կ. Պոլսում, ուր ավելի վաղ էր սկսվել հասարակական աշխույժը, առկա էին ժամանակի հզոր ազդեցությունները և դրանք ազգային շահերին համապատասխանեցնելու կարող ուժերը։ Այս հանգամանքը հոգևոր իշխանություններին մղեց ավելի վաղ դիմելու ժողովրդի օժանդակությանը։ Ոչ պակաս կարևոր դեր էր խաղում և այն, որ արևմտահայության մեջ թափանցող կաթոլիկ ու բողոքական եկեղեցու գործակալների ազդեցության դեմ պայքարելու համար հայ եկեղեցին ստիպված էր հենվել բուն ժողովրդի վրա։ Այս երևույթն ավելի ցցուն դարձավ Թանզիմաթի հռչակումից հետո, երբ հայերի ներքին կյանքի ու, մասնավորապես, դպրոցի ժողովրդականացման համար հասարակական պայքար ծավալվեց, որը դրսևորվեց, հատկապես, Սկյուտարի ճեմարանի շուրջ տեղի ունեցած բախումների ժամանակ։

Ճեմարանի նպատակի, ուսուցման բովանդակության, ուղղության հարցերում ամիրաները ցանկանում էին թելադրողի դերում հանդես գալ, որի հետ և կապում էին իրենցից ակնկալվող նյութական օժանդակությունը։ Մինչդեռ դեմոկրատական խավերը՝ հանձին էսնաֆների, ձգտում էին նորաստեղծ հաստա-

---

2 Նույն տեղում, էջ 79։

3 Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 11, վավ. 273, թ. 25։

4 «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցին հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 156—157։

5 1800—1870 թթ. արևելահայ դպրոցի պատմության մասին տե՛ս մեր նախորդ հոդվածը՝ «Էրեբեր հաս. գիտ.», 1970, № 10, էջ 31—45։

տությունը պահել իրենց ազդեցության տակ։ Վախենալով նրանց ակտիվությունից, ամիրաները հրաժարվեցին տրամադրել իրենց խոստացած նյութական օժանդակությունը, նույնն ստիպելով անել և Երուսաղեմի պատրիարքությանը։ Արհեստավորները 1841 թ. կազմեցին «Միական» ընկերություն և որոշեցին սեփական միջոցներով պահել ճեմարանը։ Ամիրաների դրդմամբ կառավարությունը միջամտեց։ Եղան ցույցեր, ձերբակալություններ։ 1841 թ. հոկտեմբերի 3-ին ճեմարանը փակվեց։ Սակայն պայքարն ավելի սրվեց և դուրս եկավ զուտ կրթական հարցերի շրջանակներից։ Ճիշտ է, այս պայքարի ընթացքում ճեմարանը փակվեց, սակայն հաղթանակեց ազգային գործերին ժողովրդի ներկայացուցիչների մասնակցության կարևոր սկզբունքը և սահմանափակվեցին ամիրաների ու հոգևորականության իրավունքները։

1840-ական թվականները նշանավորվեցին արևմտահայ դպրոցի զարգացման նոր փուլով։

Այդ տարիներին Մկրտիչ ամիրա Ճեզայիրլյանը մի խումբ պոլսահայ երիտասարդների ուղարկեց Ֆրանսիա՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Նոր մտավորականության պատրաստման գործում խոշոր դեր խաղացին Վենետիկի Ռաֆայելյան և 1846 թ. Իտալիայի Պադուա քաղաքից Փարիզ փոխադրված Մուրադյան վարժարանները, ինչպես նաև 1855—59 թթ. Փարիզում գործած Հայկազյան վարժարանը։ Հենց Կ. Պոլսում զգալի աշխատանք էր տարվում։ Հակոբ Պալյանի և Պողոս Օտյանի՝ Օրթագյուղում գտնվող տներում 1840-ական թվականներին կազմակերպվում էին մտավորականության հավաքներ, որտեղ քննարկվում էին լուսավորության ու մշակույթի հրատապ խնդիրներ, տեղի էին ունենում դասախոսություններ։ Օրթագյուղը վեր էր ածվել «տեսակ մը հայ ակադեմիայի» (Ա. Արփիարյան)։ Հավաքներին ակտիվ մասնակցում էին Մ. Պեշիկթաշլյանը, հայտնի մանկավարժ Խ. Պարտիղպանյանը, երիտասարդ Մ. Խրիմյանը և ուրիշներ։ Նման խմբակներ ու հավաքներ գոյություն ունեին նաև Փարիզի հայ ուսանողության շրջանում, որը գտնվում էր 1848 թ. հեղափոխական Եվրոպայի բարերար ազդեցության տակ։

Սկսեցին գործել նոր սերնդի ներկայացուցիչները, որոնց համար ժողովրդի կրթության ու լուսավորության հոգսը դառնում էր կյանքի նպատակ։ Դրանք արևմտահայ լուսավորիչներն էին՝ Ն. Զորայանը, Ս. Վիշենյանը (Սերվիշեն), Դր. Օտյանը, Ստ. Ոսկանյանը, Ն. Ռուսինյանը և ուրիշներ։ Նրանք պայքար ծավալեցին դպրոցի աշխարհականացման ու դեմոկրատացման, ազգային-կրթական նոր սիստեմ մշակելու համար։ Երևան եկան լուսավորական զանազան ընկերություններ և կազմակերպություններ։ Հասարակական լայն նախաձեռնությունը գալիս էր փոխարինելու նախորդ շրջանում կրթական ասպարեզում ավելի ակտիվ գործած անհատներին (ամիրաներին)։

Առաջին ընկերությունը Կ. Պոլսում ստեղծվել էր դեռևս 1812 թ. «Արշարունյաց» անվամբ, որի նպատակը ընթերցասիրության տարածումն էր։ Սակայն 1840-ական թվականներից կրթասիրական ընկերությունները սկսեցին աճել ինչպես սունկերն անձրևից հետո։ Դրանց մեջ աչքի էին ընկնում Զմյուռնիայում 1841—47 թթ. գործած «Սյունյաց ընկերությունը»՝ մոտ 600 անդամով։ Ընկերությունն օժանդակում էր քաղաքի դպրոցներին և 6 դպրոց էր բացել շրջակա գյուղերում։ Հասարակության ջանքերը, անկախ դավանաբանական վեճերից, կրթության նպատակին ծառայեցնելու համար 1846 թ. Կ. Պոլսում հիմնվում է «Համազգյաց ընկերությունը»։ Անհամաձայնությունը, սակայն,

1851 թ. խափանեց ընկերության գործունեությունը։ Կ. Պոլսում գտնվող մեծահասակ գավառահայերի մեջ գրագիտություն տարածելու, կիրակնօրյա դպրոցներ կազմակերպելու գործում զգալի դեր խաղաց «Անձնվեր ընկերությունը» (1847-ից), որը Գավառում ուներ իր մասնաճյուղերը։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք ծավալեց նաև «Բարեգործականը» (1860—68), որին մասնակցում էին ժամանակի շատ նշանավոր հասարակական գործիչներ։ Նույն նպատակով ընկերություններ էին ստեղծում Կ. Պոլսում գտնվող գավառահայերը, որոնց ազդեցության տակ 1850-ական թվականներին ընկերությունները տարածում գտան նաև Նիկոմեդիայում (Իզմիդ), Կեսարիայում, Այնթապում, Սերաստիայում և այլուր։ Դպրոցներից շատերն ունեին իրենց օժանդակող ընկերությունները։ Շուտով տարածում ստացան նաև սանուց միությունները, որոնց նպատակն էր օգնել ու բարեկարգել իրենց մայր դպրոցները։

Այս տարիներին զգալիորեն բարելավվեց դասագրքերի որակը։ XIX դ. սկզբներից արդեն դասագրքերի դեր կատարող սաղմոսին, նարեկին, ժամագրքին և այլն սկսեցին նոր սկզբունքներով կազմված գրքեր։ Դասագրքեր էին տպագրվում Վենետիկում, Վիեննայում, Կ. Պոլսում, Փարիզում, Զմյուռնիայում, Երուսաղեմում։ Երկար ժամանակ լայն տարածում ունեին Մ. Չամչյանի քերականության և Ղ. Ինճիճյանի աշխարհագրության դասագրքերը։ Քերականության մի շարք դասագրքեր ստեղծեցին Մխիթարյան հայկաբանները։ Առավել ճանաչում էր գտել Գ. Փեշտիմալճյանի քերականությունը (1829), որտեղ զգալիորեն բարելավվել էր լեզվի ուսուցման հարցը։ 1830-ական թվականներից սկսած հրապարակ են գալիս հայոց լեզվի, թվաբանության, պատմության, աշխարհագրության բարելավված դասագրքեր։

Ամբ. Գալֆայանի պատմության, աշխարհագրության, գեղագրության դասագրքերը և հատկապես «Նոր ընթերցարանը» (1861) ժամանակի մանկավարժական սկզբունքներից էին ելնում։ Սակայն այս գործում առավել նշանակալից էր Ն. Զորայանի ներդրումը։ «Վարժություն ընթերցանության ի պետս դպրոցաց» դասագրքով (1851) Զորայանը նոր խնդիրներ էր առաջ քաշում, ելնում էր ուսուցումը հեշտացնելու ու գրավիչ դարձնելու սկզբունքներից, զգալի տեղ էր հատկացնում բնագիտական գիտելիքների հաղորդմանը։ Լայն ճանաչում էր ստացել նաև 1860-ականներին Գ. Սրվանձտյանցի կազմած «Նոր ընթերցարանը»։ Դարակեսին ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, միաժամանակ, արևմտահայ դպրոցում գրաուսուցման հնչական մեթոդը հիմնականում դուրս էր մղել տառահեգականին, որը, սակայն, դեռ երկար գոյություն ուներ հեռավոր գավառներում[6]։

Լայն պայքար ծավալվեց հանուն աշխարհաբար լեզվի։ Թեև աշխարհաբարը դարձել էր մամուլի ու հրապարակախոսության լեզու, սակայն դեռևս համատարած ուսուցման լեզու չէր ընդունվում հոգևորականության ու հնի պաշտպանների կողմից։ Իր բոլոր առավելություններից բացի, աշխարհաբարը խիստ անհրաժեշտ էր նաև որոշ շրջաններում հայերի թրքախոս դառնալու սկսված պրոցեսը կանխելու համար։ Ն. Զորայանը, Գր. Օտյանը և մյուս լուսավորիչներն ավելի հիմնավորված էին դնում աշխարհարարի պահանջը։ 1853 թ. լույս տեսավ Ն. Ռուսինյանի «Ուղղախոսությունը», որը աշխարհաբար լեզվի քերա-

---

6 Տե՛ս Գ. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի 50—60-ական թվականները), Ե., 1969, էջ 334։

կանությունն էր։ Սրանով ծայր առած հայտնի գրապայքարը սուր բնույթ ընդունեց։ Թեև պահպանողականներին հաջողվեց արգելել «Ուղղախոսությունը», պայքարը գնալով ավելի ծավալվեց և նպաստեց աշխարհաբարի հետագա տարածմանը.

1840-ական թվականներից սկսված այս ամբողջ կրթական-լուսավորական շարժումը խոր հետքեր թողեց արևմտահայ նոր դպրոցի կյանքում։ 1853 թ. Ազգային ժողովի ստեղծած Ուսումնական խորհուրդը, որի գործուն անդամներն էին Ն. Ռուսինյանը, Ն. Զորայանը, Գր. Օտյանը, Ն. Պալյանը, Կ. Յութուճյանը, Սերվիչենը և ուրիշներ, պետք է նպաստեր դպրոցի բարելավմանը։ սակայն հաճախ տարվելով վիճաբանություններով, պայքարի մեջ մտնելով խավարամոլների ու պահպանողականների դեմ, խորհուրդն ավելի շատ ծրագրող եղավ, քան գործնական։ Հրապարակի վրա մեծ մասամբ կոնկրետ աշխատանք էր կատարվում հասարակական նախաձեռնության ու առանձին հայրենասեր գործիչների ջանքերով։ Դպրոցները հիմնականում ղեկավարվում էին յուրաքանչյուրն իր ներքին կանոններով ու ծրագրերով։

Ղրիմի պատերազմից և Թանզիմաթի վերահաստատումից հետո սկսված քաղաքական աշխուժությունն իր մեջ առավ նաև կրթական շարժումը։ Ազգային սահմանադրության վերջնական հաստատումից հետո (1863) ստեղծված ուսումնական նոր խորհուրդը պետք է մոտիկից զբաղվեր դպրոցական ընդհանուր կանոններ մշակելու, դպրոցական ցանցը հատկապես գավառում տարածելու և այլ հրատապ խնդիրներով։ Հաջորդ տարի ուսումնական խորհուրդը հրապարակեց Ստ. Փափազյանի կազմած ազգային վարժարանների կանոնադրությունը[7], հաստատվեցին դասավանդվելիք առարկաների ցանկը և ծավալը։

Մինչ այդ դպրոցական ծրագրերի ու կանոնների մեջ չկար միօրինակություն, շատ հարցեր լուծվում էին ըստ հայեցողության։ Առավել ևս շփոթ էր տիրում դպրոցների տիպերի ու աստիճանականության հարցում։ Չնայած բազմաթիվ առաջարկներին (Սերվիչեն, Ն. Զորայան), այս հարցը երկար ժամանակ չէր կարգավորվում։ 1864 թ. կանոնադրությունը ազգային վարժարանները բաժանում էր երկու կարգի՝ նախակրթարան և երկրորդական։ Նախակրթարանը (տարրական դպրոցը) իր հերթին բաժանվում էր երկու սրահի։ Առաջին սրահում (դասարան) ավանդվելու էին ընթերցանություն, գիր, թվաճանաչություն, կրոն։ Երկրորդ սրահում, որ բաժանվում էր չորս դասարանի (չորս տարի), ավանդվելու էին քերականություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, կրոն, գեղագրություն, երգեցողություն։ Այս դասընթացն ավարտելուց հետո միայն աշակերտը կարող էր անցնել երկրորդական վարժարան, որտեղ ուսման տևողությունը ևս հինգ տարի էր և մեկ տարի էլ լրացուցիչ հատկացվում էր ավարտական քննություններին պատրաստվելու համար։ Այստեղ արդեն արվում էր լրիվ միջնակարգ կրթություն՝ բնագիտական և մաթեմատիկական առարկաների ուսուցմամբ։ Դպրոց էին ընդունվում յոթ տարեկանից։ Ուսումնական տարին սկսվում էր նոյեմբերի 1-ին։ Դպրոցների կառավարումը հանձնարարվում էր թաղական խորհուրդների ընտրած հոգաբարձություններին։

Կանոնադրության ընդունումն արևմտահայ դպրոցի խոշոր նվաճումն էր։ Սակայն, եթե կենտրոններում հնարավոր եղավ նրա քիչ թե շատ լրիվ կիրա-

7 Տե՛ս «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց», Կ. Պոլիս, 1864։

ռումը, ապա ընդհանուր արևմտահայության մասշտաբով չհաջողվեց մինչև վերջ ստեղծել մեկ միասնական դպրոցական սիստեմ։ Դա բացատրվում է՝ նախ, օսմանյան կայսրության ծայրաստիճան հետամնացությամբ ու երկրում տիրող ռազմա-ֆեոդալական դաժան իրավակարգով, ինչպես նաև՝ «ազգային ուժերի, նրա միությունների ու ընկերությունների ցիրուցան վիճակով, պահպանողական տարրերի դիմադրությամբ, օտարերկրյա գործակալների ծավալած դավանաբանական պառակտիչ գործունեությամբ»[8]։

Այսպիսով, 1840—60-ական թվականներին արևմտահայ դպրոցը նկատելի վերելք ապրեց, որն առաջին հերթին արտահայտվեց Կ. Պոլսում։ Այստեղ յուրաքանչյուր հայաբնակ թաղում կար ազգային վարժարան (դրանք գրեթե նույնն էին, ինչ որ արևելահայերի ծխական դպրոցները)։ Եթե 1830—35 թթ. Կ. Պոլսում կար 30-ի չափ թաղային վարժարան[9], ապա 1870 թ., ըստ Ազգային կրթական խորհրդի տվյալների, դրանց թիվը հասել էր 61-ի, որից 28-ը՝ իգական։ Այդ դպրոցներն ունեին 3842 աշակերտ, 1862 աշակերտուհի և 226 ուսուցիչ[10]։ Սկզբնական շրջանում Կ. Պոլիսը հնարավորություն չուներ կադրերով օգնելու գավառին, իսկ ազգային «շոջերին» շատ քիչ էր հետաքրքրում այնտեղ տիրող վիճակը։ Եվ գավառն հազիվ կարողանում էր սեփական նախաձեռնությամբ մի քանի կենտրոններում ու վանքերում խղճուկ դպրոցներ պահել։ 1834 թ. պատրիարքարանի տվյալներով, ամբողջ կայսրությունում հաշվվում էր 114 ազգային դպրոց[11] (առանց Պոլսի)։ Սրանք գերազանցապես խալֆայատիպ կրթարաններ էին, ըստ որում, դրանց մեծ մասը գտնվում էր Թուրքիայի արևմտյան շրջաններում (միայն Նիկոմեդիայի շրջանում 38 դպրոց կար)։

Ժամանակի հասկացողությամբ՝ նո՛ր աշխարհիկ դպրոց գավառում սկսեց հիմնվել միայն 1850-ական թվականներից։ Պոլսում գտնվող գավառահայերի ու պանդուխտների կազմակերպած ընկերությունների ջանքերով և ազգային սահմանադրության հաստատումից հետո այդ պրոցեսն ավելի ուժեղացավ։ 1870-ականների սկզբին, Ազգային կենտրոնական վարչության կազմած վիճակագրության համաձայն, Թուրքիայում կար 450-ից ավելի ազգային դպրոց, ավելի քան 24 հազար սովորողով, որից 3000-ը՝ աղջիկ[12]։ Սակայն այս տվյալները խիստ պակասավոր են, որովհետև տեղեկություններ չլինելու պատճառով հաշվից դուրս էին մնացել մի շարք շրջանների (Վան, Մուշ, Կարս, Կիլիկիա, Զմյուռնիա, Նիկոմեդիա) դպրոցներ։ Հաշվի մեջ չէր մտցված նաև Կ. Պոլիսը։

Արևմտահայ առանձին դպրոցներ և լուսավորության կենտրոններ կարևոր դեր են խաղացել ինչպես ուսուցչական կադրերի պատրաստման, այնպես էլ դպրոցական շարժման, մանկավարժական նոր ձևերի ու մեթոդների տարածման գործում։ Առաջնությունն, անտարակույս, պատկանում է Կ. Պոլսին։

Կ. Պոլսի գրեթե բոլոր վարժարանները պարզ նախակրթարանից բարձր մակարդակ ունեին, իսկ նրանցից մի քանիսը երբեմն հասնում էին միջնակարգի աստիճանի։ Այսպիսի դպրոցներից էր Գում Գարուի մայր վարժարանը, որը հիմնվել էր 1790 թ.։ 1820-ական թթ. այս դպրոցում ավանդում էր հայտնի

---

8 Գ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 207։

9 Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ. թղթ. 11, վավ. 273, թ. 188—189։

10 «Տնեղեկագիր ազգային կրթական խորհրդո առ ամենապատիվ սրբազան պատրիարք Հայրն և առ Քաղաքական ժողովն ազգ. կեդրոնական վարչութեան», Կ. Պոլիս, 1871, էջ 12։

11 Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 11, վավ. 273, թթ. 662—664։

12 Համարատվություն Ազգային կեդրոնական վարչության 1872—1873, մասն Դ, էջ 39—74։

մանկավարժ Գր. Փեշտիմալճյանը, և դպրոցը բավական բարձր մակարդակի էր հասել։ 1828 թ. Հարությունն ամիրա Պեզճյանի նախաձեռնությամբ վերակառուցվում է դպրոցը (հաճախ այն կոչվում էր Պեզճյանի անունով) և այնտեղ տեսուչ է նշանակվում Գր. Փեշտիմալճյանը, որը զգալի աշխատանք է կատարում մայրենի լեզվի դասավանդումը բարելավելու ուղղությամբ։ Ուսումնարանի վերելքը տևում է մինչև 1834 թ., երբ մահանում է Պեզճյանը, իսկ Փեշտիմալճյանը հեռանում է այնտեղից։

Մյուս աշքի ընկնող դպրոցը Խասգյուղի Ներսիսյան վարժարանն էր, որն ըստ Ա. Ալպոյաճյանի՝ պետք է հիմնված լիներ XIX դարի երկրորդ տասնամյակում[13], 1836—38 թթ. Ներսիսյան վարժարանը հասել էր միջնակարգի աստիճանի, այնտեղ ավանդվում էին բնագիտական առարկաներ, քիմիա, ֆրանսերեն, իտալերեն։ Ուներ 600 աշակերտ։ Հետագայում ևս Ներսիսյան վարժարանը նշանակալից դեր էր խաղում, զգալիորեն ներգործելով մյուս դպրոցների վրա։ 1856 թ. այստեղ կազմակերպվել էր դպրոցական թատրոն, որով սկզբնավորվել է Խասգյուղի թատրոնը։ Ներսիսյան վարժարանում են սովորել Հ. Սվաճյանը, Ռ. Պերպերյանը, Ն. Վարժապետյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Մ. Ջերաղը և ուրիշ նշանավոր հայ գործիչներ։

Զգալի հեղինակություն էին ձեռք բերել նաև Սամաթիայի Սահակյան և Օրթագյուղի վարժարանները։

1838 թ. Կարապետ ամիրա Պալյանի և Հովհաննես ամիրա Սերվերյանի նախաձեռնությամբ ու Ստեփանոս Աղավնի պատրիարքի օժանդակությամբ Սկյուտար թաղամասում բացվում է «Ազգային ճեմարան ս. Երուսաղեմի» անվանված ուսումնական հաստատությունը, որն ավելի շատ հայտնի է Սկյուտարի ճեմարան անունով։ Ճեմարանը պահվելու էր Երուսաղեմի վանքի և հասարակության միջոցներով։ Այն հենց սկզբից միջնակարգ դպրոցի ընթացք ուներ, դասավանդումը տարվում էր ժամանակի առաջավոր մեթոդներով։ Այնտեղ ուսուցանում էին հայտնի մանկավարժներ Հ. Մանվելյանը, Խ. Պարտիզպանյանը և ուրիշներ։ Սակայն իրերի բերումով դառնալով հասարակական սուր պայքարի ասպարեզ, ճեմարանը 1841 թ. փակվեց։ 1846 թ. Մատթեոս Զուհաճյան պատրիարքը վերաբացեց ճեմարանը, իսկ 1850 թ., նյութական սուղ պայմանների պատճառով, այն միացվեց Ազգային հիվանդանոցի վարժարանին և կոչվեց Ս. Փրկչի ճեմարան։ Թեև նյութական վիճակը ծանր էր, բայց ճեմարանը բարձր մակարդակի հասավ։ Այնտեղ գործնական պարապմունքներ էին կազմակերպվում ֆիզիկայից, բնագիտությունից, կիրառվում էին ուսուցման նոր մեթոդներ։ Նորություն էր հողագործության, դերձակության, կոշկակարության ուսուցումը։ 1856 թ. ճեմարանը կրկին կազմալուծվեց և միայն հաջորդ տարի վերականգնվեց եռանդուն մանկավարժ Ք. Ղազարոսյանի համառ ջանքերով։ Սակայն, դարձյալ նյութական խիստ անբարենպաստ պայմանների պատճառով, 1861 թ. ճեմարանը կրկին փակվեց։

Պոլսահայերի կրթական գործում 1860-ական թվականներին և հետագա տարիներին կարևոր դեր խաղացին նաև մասնավոր դպրոցները։ Սրանցից աշքի ընկան Ա. Կրճիկյանի դպրոցը (1861) Պեշիկթաշում և Գում Գաբուի Մեզուրյան երկսեռ վարժարանը (1865), որը 1879 թ. տեղափոխվեց Սկյուտար ու վերածվեց իգական միջնակարգ դպրոցի։ Լրիվ միջնակարգ դպրոց էր 1866 թ.

---

13 Տե՛ս Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 11, վավ. 273, թ. 188։

Խասգյուղում Կարապետ վրդ. Շահնազարյանի կտակով և Նուպար փաշայի միջոցներով բացված Նուպար-Շահնազարյան վարժարանը, որը գտնվում էր պատրիարքարանի խնամակալության տակ։ Տաս տարի գոյատևած այդ դպրոցը հիանալի կադրեր պատրաստեց և աչքի ընկավ իր ընդգծված աշխարհիկ բնույթով։

Արևմտահայերի կրթական շարժման երկրորդ խոշոր կենտրոնը Զմյուռնիան էր, որ ամենից ավելի հռչակվել էր իր Մեսրոպյան վարժարանով։ Այս վարժարանը, հիրավի, արևմտահայ ամենից նշանավոր դպրոցն է եղել, այն անվանել են «հայկական Աթենք», այնտեղ կրթվել ու դաստիարակվել են հայ մշակույթի գործիչներից շատ-շատերը։ Վարժարանը հիմնվել է 1799 թ. Ապրոյան ընտանիքի միջոցներով։ Հենց սկզբից Զմյուռնիայի հայերը ջերմ սիրով են շրջապատել դպրոցը և նյութապես ապահովել նրա գոյությունը, իսկ 1841 թ. հիմնված «Սյունյաց ընկերությունը» է՛լ ավելի է նպաստել դպրոցի նյութական վիճակի բարելավմանը։ Մեսրոպյան դպրոցում տեսուչներ են եղել և մեծապես օժանդակել են նրա բարեկարգմանը մի շարք անվանի կրթական-հասարակական գործիչներ (Հովհան Վանանդեցի, Անդր. Փափազյան, Մ. Աղաբեկյան, Ստ. Ոսկանյան, Մ. Մամուրյան)։ Դպրոցն ապրել է ուրույն կյանքով, գրեթե մշտապես ունեցել է միջնակարգի բարձր մակարդակ, այստեղ ուսուցումը տարվել է հաջորդականության ու սիստեմատիկության սկզբունքով, աշակերտների տարիքային առանձնահատկությունների խիստ հաշվառմամբ, ուսումնական աշխատանքները կազմակերպվել են որոշակի կանոններով։ Մեսրոպյան վարժարանն ունեցել է իր տպարանը (1840), բնագիտական ու ֆիզիկական գործիքներ, սարքեր, քարտեզներ։ Աշակերտությունն այստեղ կրթվել ու դաստիարակվել է հայրենասիրության ոգով, ազատամիտ գաղափարներով։ Վարժարանի հռչակն այնպես էր տարածվել, որ այնտեղ սովորելու էին գալիս նույնիսկ Կ. Պոլսից։ Ուսման տևողությունը եղել է 10—11 տարի, մինչև 1870-ական թթ. աշակերտները սովորել են անվճար։

Կ. Պոլիսն ու Զմյուռնիան հանդիսացել են նաև արևմտահայերի իգական կրթության սկզբնավորողները։ Դեռ 1821 թ. Ճանիկ ամիրա Փափազյանի քույրը Կ. Պոլսում բացում է աղջիկների դպրոց, 1826 թ. Պեզճյանը հիմնում է ասեղնագործության վարժարան, իսկ 1830 թ. Ճանիկ ամիրան բացում է Հռիփսիմյան և Գայանյան վարժարանները։ Զմյուռնիայում առաջին իգական դպրոցը հիմնվել է ավելի վաղ՝ 1820 թ., ազգային հիվանդանոցի շենքում, որը 1838 թ. վերածվում է Սարգիսյան վարժարանի։ 1845 թ. հայտնի հրդեհից հետո այս վարժարանը վերաշինվում է և կոչվում «Հռիփսիմյան»։ Մշտապես գտնվելով Մեսրոպյան վարժարանի բարերար ազդեցության տակ, այս դպրոցը նույնպես բարձր հեղինակության է հասնում։

Առաջին քայլերից հետո, 1850—60-ականներին Կ. Պոլսի թաղային վարժարաններին կից բացվում են նաև աղջիկների բաժանմունքներ կամ հիմնվում ինքնուրույն դպրոցներ։ 1865 թ. Կ. Պոլսի Խասգյուղում մայրապետ Սրբուհի Գալֆայանը հիմնում է աղջիկների որբանոց՝ իր դպրոցով։ 1869 թ. Կ. Փանոսյանը բացում է մասնավոր Ագապյան վարժարանը, որը գործում է մինչև 1876 թ. և լավ համբավ վայելում։ Վարժարանում, որ միջնակարգի մակարդակ ուներ, դասավանդվում էին նաև երաժշտություն, կար ու ձև, կազմակերպվում էին հանդեսներ, ներկայացումներ։ Այս շրջանում աղջիկների առան-

ձին դպրոցներ սկսեցին երևալ նաև գավառի մի շարք կենտրոններում՝ Կարինում, Պարտիզակում, Կեսարիայում, Մարաշում և այլ վայրերում։

Թուրքիայի հայաբնակ արևմտյան գավառներում ավելի շուտ տարածվեց աղղային դպրոցը։ Նիկոմեդիայում, Պարտիզակում, Օվաջըկում, Արսլանբեկում, Ատարազարում, Կուտինայում, Ռոտոսթոյում գործում էին բավականին լարեկարգ դպրոցներ։ Բրուսայում Գեորգ վրդ. Քերեստեճյանը (ապագա կաթողիկոս) 1844 թ. կրթական լայն գործունեություն ծավալեց։ Նրա ստեղծած դպրոցը, որը 1866 թ. տեղափոխվեց նորակառույց եռահարկ շենք և կոչվեց Գևորգյան վարժարան, ուներ 900-ից ավելի աղջիկ և տղա աշակերտ[14]։ Կրթական կյանքը նկատելի աշխուժացում ապրեց Արմաշի նշանավոր վանքում, ուր 1821 թ. հիմնված ժառանգավորաց դպրոցը նաև ուսուցիչներ էր պատրաստում։ Կրթական նշանակալի կենտրոն էր Կեսարիան։ Կարևոր դեր էին խաղում Կեսարիայի ս. Կարապետ վանքի դպրոցը և մոտակա Կերմեր գյուղի՝ Պարթևյան վարժարանը։

Կարինը ևս արևմտահայերի հնագույն կրթական օջախներից էր։ 1811 թ. Կարապետ եպիսկոպոսը այստեղ բացում է մայր վարժարան։ Հայերի 1829—30 թթ. գաղթից հետո, 1840-ականներին Կարինում կրկին աշխուժանում է կրթական կյանքը։ Գր. եպս. Զորաբելյանի, Կարապետ Զաքարյանի, Գր. Արծնյանի, Հ. եպս. Վեհապետյանի, Դ. Սրվանձտյանցի եռանդուն ջանքերով Կարինում կյանք առան մի շարք կրթական օջախներ, որոնցից հատկապես աչքի ընկավ Արծնյան դպրոցը։ 1870-ական թթ. սկզբին քաղաքում գործում էին 5 դպրոց և 3 ծաղկոց (ընտելարան), ավելի քան 1300 աշակերտով[15]։ Կրթական որոշակի կենտրոններ էին նաև Այնթապը, Երզնկան, Զեյթունը, Թոմարզան, Մտրաշը, Հաճընը, Մալաթիան, Խարբերդը, Եվդոկիան, Սեբաստիան, Արաբկիրը, Վանը։

Սակայն այս բոլորի մեջ բացառիկ երևույթ էր Վարագա հինավուրց վանքում 1857 թ. Մկրտիչ Խրիմյանի ստեղծած ժառանգավորաց դպրոցը[16]։ Կ. Պոլսի լուսավորական-առաջադիմական շրջանների հետ սերտորեն շփված Խրիմյանը, գավառում կրթություն տարածելու եռանդով վերադառնում է Վարագ՝ իր հետ բերելով տպարանը։ Նա իր շուրջն է համախմբում մի խումբ գավառահայ պատանիների ու նվիրվում նրանց կրթելու գործին։ Խրիմյանը զգալիորեն ընդարձակեց վանքի շինությունները, դպրոցի համար կառուցեց ննջարան (դպրոցը գիշերօթիկ էր), ճաշարան, գործածության մեջ դրեց աշակերտական նստարաններ, ուսումնական պիտույքներ, կազմակերպեց գավառագիտական փոքրիկ թանգարան։ Կարճ ժամանակում դպրոցը լայն հռչակ ձեռք բերեց։ Խավարամոլների ոտնձգություններից ազատ լինելու և դպրոցի նյութական ապահովածության նպատակով նա դիմեց արևելահայերի օգնությանը և 1860 թ. մեկնեց Կովկաս, որտեղ ջերմ օժանդակություն և ընդունելություն գտավ։ Շուտով դպրոցը դարձավ ամբողջ Վասպուրականի հայրենասիրական ուժերի հավաքատեղի։ Դ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Երեմիա և Արիստակես Տեկանցները և ուրիշներ դառնում են Խրիմյանի սկսած գործի՝ ծավալողներն ու աջակիցները։ 1862 թ. Խրիմյանը նշանակվում է Տարոնի թեմի առաջնորդ և.

---

14 Տե՛ս Մ. Աբեղյան, Գևորգ Դ. մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899։

15 Համարատվություն Ազգային Կեդրոնական վարչության 1872—1873, մասն Դ, էջ 39։

16 Տե՛ս Տ. Զիթունի, Վարագա հոբելյան, Կ. Պոլիս, 1910։

միաժամանակ մնալով իր ստեղծած դպրոցի տեսուչ, տեղափոխվում է Մուշ, ուր նույնպես տպարան ու դպրոց է հիմնում։ 1869 թ., երբ Խրիմյանն ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք, դպրոցի կյանքում վայրէջք է սկսվում։

Բացի հիշատակվածներից, արևմտահայության շրջանում գործում էին նաև հայ կաթոլիկական դպրոցներ, որոնք հիմնականում պատկանում էին Մխիթարյաններին և Լիբանանի Անտոնյան միաբաններին։ Այդ դպրոցների մեծ մասը կենտրոնացած էր Կ. Պոլսում, Զմյուռնիայում և մի շարք հայաշատ այլ կենտրոններում։ Կ. Պոլսի Մխիթարյան դպրոցներում, որտեղ սովորում էին հայ երեխաները առանց կրոնական խտրության, ժամանակին դասավանդել են Մ. Չամչյանը, Մ. Բժշկյանը, Մ. Ավգերյանը և այլ նշանավոր հայկաբաններ։ Սկզբում կաթոլիկական դպրոցները գործում էին գաղտնի։ Միայն 1830 թ. հետո, երբ կառավարությունը հայ կաթոլիկներին թույլ տվեց առանձին պատրիարքություն ունենալու, այդ դպրոցներն սկսեցին գործել անկաշկանդ։

Ավելի մեծ տարածում ունեին ամերիկյան բողոքական միսիոներների դպրոցները։ Միսիոներներն առաջին հերթին հետապնդում էին դավանաբանական-քաղաքական նպատակներ։ Նրանք իրենց գործունեությունը ծավալել էին գերազանցապես հայ բնակչության շրջանում։ Առաջին դպրոցը միսիոներները հիմնեցին Կ. Պոլսում, 1834 թ.։ Նրանք դասավանդումը տանում էին մեծ մասամբ հայ ուսուցիչների միջոցով և աշխարհաբարով, տպագրում և անվճար տարածում էին աշխարհաբար գրքեր, նպաստում էին աղջիկների դպրոցների հաստատմանը։ 1850—60-ական թվականներին միսիոներական դպրոցները բավական լայնորեն թափանցել էին Արևմտյան Հայաստանի գավառները։ 1869 թ. գործում էր 170 միսիոներական դպրոց՝ մոտ 5 հազար աշակերտով[17]։ Այդ դպրոցներում հիմնականում սովորում էին հայ երեխաներ։ Դրանք ըստ էության հայկական վարժարաններ էին[18]։ Այս շրջանում ամերիկյան միսիոներներից առավել եռանդունը Համլինն էր, որը 1840 թ. Պոլսում բացել էր աստվածաբանական վարժարան։ Միսիոներությունից հեռացած Համլինը այս վարժարանից հիման վրա 1868 թ. կազմակերպեց հետագայում լայն ճանաչում ստացած Ռոբերտ կոլեջը։

XIX դ. սկզբից հայ նոր դպրոցի ձևավորմանը զուգընթաց սկսեց կազմավորվել նաև նոր մանկավարժական միտքը։ Անխուսափելիորեն ազդվելով ժամանակի եվրոպական ու ռուսական մանկավարժության ու լուսավորիչների առաջադեմ գաղափարներից, հայ կրթական գործիչները միաժամանակ, հետևելով հայրենի ավանդներին, ստեղծեցին սեփական, ազգային մանկավարժություն ու դպրոց։

Կրթական գործիչների առաջին սերնդի ականավոր ներկայացուցիչներին (Հովհան Վանանդեցի՝ *1772—1840*, Գրիգոր Փեշտիմալճյան՝ *1773—1837*, Ֆիզիկա Պողոս *(Մելիքշահյան)*՝ *1788—1855*, Անդրեաս Փափազյան՝ *1806—1857*, Խաչատուր Պարտիզպանյան՝ *1809—1856*, Անդրեաս Փոփովիչ՝ *1809—1858*, Հարություն Ալամդարյան՝ *1796—1834*, Սերովբե Պատկանյան՝ *1760—1836*, Գաբրիել Պատկանյան՝ *1802—1889*, Եղոր Խուբով՝ *1762—1829*) հատուկ էր ջերմ հայրենասիրությունը, որը նրանց մղում էր դպրոցներում բարելավելու

---

17 *Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 11, վավ. 273, թ. 1519։*

18 *Տե՛ս նույն տեղում, թ. 1529։*

մայրենի լեզվի ուսուցումը, վերականգնելու և զարգացնելու ազգային ավանդությունները, նանապարհ հարթելու դպրոցի ժողովրդականացման համար։ Նրանց անձնազոհ ջանքերով 1840—60-ական թվականներին հրապարակ մտավ մանկավարժների հաջորդ սերունդը, որն ավելի պատրաստված ու լուսավորված էր և վճռական դեր խաղաց հայ նոր դպրոցի համար մղված հասարակական պայքարում։ Այս սերնդի գործիչներին ընդհանուր առմամբ հատուկ էր շեշտված լուսավորական երանգը։

1840—60-ական թվականների հայ լուսավորիչները միատարր չէին իրենց քաղաքական հայացքներով։ Ժամանակի հայ մամուլում և հասարակական կյանքում ժողովրդի կրթության ու լուսավորության հարցերը ամենաառաջին պլան էին քաշված և լուսավորիչները աշխույժ վիճաբանում էին, քննադատում միմյանց հայացքներ։

Խաչատուր Աբովյանն անզիջում պայքարի դրոշ պարզեց կրթական ասպարեզում արմատացած հնի ու հետադիմականի դեմ, գիտակցն ձևակերպում տվեց ազգային դեմոկրատական մանկավարժական մտքի բազմաթիվ հարցերի, հիմնավորեց աշխարհաբարի անհրաժեշտությունը, ջանաց ժողովրդի մեջ լույս ու կրթություն տարածել։ Աբովյանը հայ մանկավարժության ու դպրոցի պատմության մեջ կատարեց նույն դերը, ինչ որ Պեստալոցցին և Ուշինսկին՝ ընդհանուր մանկավարժության պատմության մեջ։

Արևմտահայ իրականությունից Աբովյան-մանկավարժի կողքին կանգնում է անխոնջ դիտնական-մանկավարժ Նիկողայոս Զորայանը (1821—1859)։ Նա մշակել է մանկավարժության տեսական բազմաթիվ հարցեր, զբաղվել դիդակտիկայի մեթոդների հիմնավորմամբ, կազմել ու մասամբ կիրառել է դպրոցական նոր ծրագրեր ու կանոններ, գրել է միասնական ազգային կրթական սիստեմ ստեղծելու պահանջ։ Բժիշկ Սերովբե Վիշենյանը (Սերվիշեն՝ 1815—1897) առաջինն էր, որ հիմնավորապես առաջ քաշեց դպրոցական առողջապահության և հարակից բազմաթիվ մանկավարժական հարցեր։ Պետրոս Շանշյանը (1819—1883) անջնջելի հետք թողեց հայ դպրոցի պատմության մեջ՝ անդուլ եռանդով դպրոցից դուրս մղելով մարմնական պատիժն ու սխոլաստիկան, ջերմ ու անկաշկանդ մթնոլորտ ստեղծելով այնտեղ, արմատավորելով մայրենի լեզվով դասավանդելու սկզբունքները։ Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858) բազմաթիվ կրթական հարցերի հետ միասին առաջիններից մեկն էր, որ ամբողջ ձայնով հնչեցրեց կանանց կրթություն տալու պահանջը։ Աբովյանի սկսած պայքարը հնի դեմ շարունակեց Ստեփանոս Նազարյանը (1812—1779), որի առաջադրած լուսավորական գաղափարները, ազգային ինքնուրույն դպրոց ստեղծելու խնդիրները լայն ճանաչում գտան ու մեծ ազդեցություն ունեցան հետագա սերունդների վրա։

Նոր դպրոցի կազմավորման տարիներին նրան խոշոր ծառայություն են մատուցել նաև հասարակական-քաղաքական գործիչներ Ստեփան Ոսկանյանը (1825—1901), Նաճապետ Ռուսինյանը (1819—1876), Գրիգոր Օտյանը (1834—1887), Հարությունն Սրվանձյանը (1831—1874), Մատթեոս Մամուրյանը (1830—1901), Կարապետ Փանոսյանը (1826—1905), Գրիգոր Զիլինկիրյանը (1833—1923), Մկրտիչ (1818—1890) և Գրիգոր (1825—1868) Աղաթոնները, Մարկոս Աղարեկյանը (1830—1908), Կարապետ Յուրուճյանը (1823—1904) և ուրիշներ, որոնք բազմիցս հանդես են եկել նոր դպրոցի ու լուսավորության սկզբունքների հիմնավորմամբ և շատ դեպքերում էլ զբաղվել են ուսուցչությամբ։

Նոր սերնդի մեջ, սակայն, Միքայել Նալբանդյանն էր, որ հանդես եկավ ամենից ավելի արմատական պահանջներով և փայլուն կերպով հիմնավորեց հասարակ ժողովրդին լուսավորելու հարցերը։ Հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը լուսավորության ու դպրոցի ապագան կապում էր ժողովրդի աղատագրության հեռանկարի հետ։ Երեխաների կրթության գործում նա մեծ նշանակություն էր տալիս մայրենի լեզվին ու նրա դաստիարակիչ հատկությանը, ընտանիքին ու մորը։ Արովյանի մանկավարժական գաղափարները Նալբանդյանը բարձրացրեց նոր աստիճանի։

Բուն ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու, մանկավարժական նորություններ կիրառելու գործում անգնահատելի են Մկրտիչ Խրիմյանի (1820—1907) և նրա սաների (որոնց մեջ հատկապես առանձնանում է Գարեգին Սրվանձտյանցը՝ 1840—1892) անուրանալի ծառայությունները։

Ժամանակի հայ գրողների մեծ մասը ևս սերտորեն կապված է եղել դպրոցի հետ, քանի որ հասարակական գործունեության այլ ասպարեզներ գրեթե չկային, և նրանք իրենց հայրենասիրական պարտքն էին համարում ծառայել ժողովրդի կրթության գործին։ Անուրանալի ավանդ ունեն այս ասպարեզում Ղևոնդ Ալիշանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Մեբենցը (Հովսեփ Շիշմանյան), Ռափայել Պատկանյանը, Սմբատ Շահազիզը, Բաֆֆին, Պերճ Պռոշյանը, հատկապես Ղազարոս Աղայանը և ուրիշներ։

Դպրոցական կրթական գործում որոշակի ծառայություններ ունեն նաև զարգացող բուրժուազիայի մի շարք խոշոր ներկայացուցիչները (Լազարյաններ, Հարություն Պեզճյան, Պալյաններ)։

Այսպիսով, մինչև 1870-ական թվականները և՛ արևելահայ, և՛ արևմտահայ իրականության մեջ կրթության ու լուսավորության գործը առաջընթաց էր կատարել։ Կազմավորվել էր ազգային մանկավարժական միտքը։ Բայց այս շրջանը երկու հատվածների համար էլ կարելի է բնորոշել հիմնականում որպես որոնումների շրջան, երբ դեռ նոր էր կազմավորվում միասնական դպրոցը։ Հասարակական բախումները, կրթական գործիչների ճիգ ու ջանքն ավելի շատ գաղափարական հիմնավորման ու նախապատրաստության բնույթ էին կրում, ճանապարհ էին հարթում առաջիկայում դպրոցի ավելի կազմակերպված գործունեության և առաջընթացի համար։

АРМЯНСКАЯ ШКОЛА В 1800—1870 гг.

В. С. ЕРКАНЯН

Резюме

У западных армян новая школа возникла в конце XVIII в., когда турецкое правительство разрешило армянскому патриарху Константинополя организовать школы при церквах. С начала XIX в. такие школы в первую очередь создаются в Константинополе, Смирне, а с середины века появляются уже и в других местах. Общественная борьба за новые принципы и демократизацию обучения разгорается в 1840-х гг. вокруг Ускютарской школы. В эти же годы широкий размах приобретает деятельность различных просветительных обществ, которые стремились развивать народное образование в самой Западной Армении. В 1864 г.

издаются единые правила для армянских школ. Но отсталость военно-феодальной Османской империи, а также раздробленность общественных сил армян мешали созданию единой национальной школьной системы. Однако, несмотря на неблагоприятные условия, благодаря усилиям передовых сил армянского народа к началу 1870-х гг. по далеко неполным данным у западных армян было более 450 национальных школ. В самой Западной Армении и Киликии важными центрами национального образования были Ван, Карин (Эрзерум), Айнтап, Мараш, Муш и др.

Примечательным явлением рассматриваемого периода было формирование армянской национальной педагогической мысли.

Выдающимися педагогами и деятелями народного образования были Х. Абовян, Гр. Пештималджян, С. Патканян, А. Аламдарян, А. Папазян, Н. Зораян, Н. Русинян, П. Шаншян, М. Хримян, Г. Срванцтянц, С. Назарян и др.